

ՄԵԾԱՀԱՐԳ ՄԻԽԱՅԻԼ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ
ՊՐԵԶԻԴԵՆՏ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ

Մոսկվա

Գոհունակությամբ հաստատում ենք Մեր 7 սեպտեմբեր 1990 թվակիր նամակը ի պատասխան Ձեր կարևոր նամակի, որ Մեզ հանձնվեց օգոստոս ամսի սկզբներին:

Այսօր ստիպված ենք կրկին դիմել Ձեզ, այս անգամ խոր վշտով ու վրդովումով տեղեկացնելու համար, որ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության վիճակը դարձած է ողբերգական նաև եկեղեցական կյանքում:

Լեռնային Ղարաբաղի հոգևոր առաջնորդը՝ Պարգև Եպիսկոպոս, հաղորդեց Մեզ, թե կիրակի օր, 9 սեպտեմբերին, Ամարասի հայկական վանքում (հիմնված 4-րդ դարում), հանդիսավոր պատարագից հետո, գիշերը երկու անգամ ենթարկված է հարձակումների բանակային համազգեստով անձանց կողմից, որոնք կրակ են բացած վանքի պատերին, սարսափի մատնելով հոգևոր ծառայողներին և անզեն պահակներին: Վտանգի տակ են նոր վերաբացված մեր հինգ վանքերն ու եկեղեցիները և մեր հոգևորականների կյանքը:

Դիմում ենք Ձեզ ծանր ապրումներով, սակայն տակավին հույսով, որ Ձեր բարձր հեղինակությամբ և օրենքի ուժով և ազգությունների ինքնորոշման իրավունքով վերջ կգտնի Լեռնային Ղարաբաղում հայերի ողբերգությունը, ինքնավար այդ մարզը դնելով Ձեր պրեզիդենտական իշխանության ներքև: Անիրավված հայերի համբերության բաժակը վաղուց լցված է, և նրանք պատրաստ են ազատ մեռնելու, քան ստրուկ ապրելու, ինչպես հերոսները Տերմոպիլեի, Վալմիի և Կուլիկովի:

Ձեր չափազանց բազմազբաղ և տագնապալի այս օրերին, խնդրում ենք մի պահ գոնե Ձեր ուշադրությունը ուղղեիք դեպի Լեռնային Ղարա-

բաղում տառապող մեր ժողովուրդը և Ձեր խաղաղարար արդար մի վճռով փրկեիք նրանց, հանուն Ձեր հռչակած հումանիստական մեծ գաղափարների, հօգուտ նաև ադրբեջանցի մեր հարևան ժողովուրդի կյանքի խաղաղության:

Թույլ տվեք վերջացնել Մեր խոսքը Լամարտինի տողերով՝ «Ուժեղների փառքը տկարների ազատությունն է»:

Խորին հարգանքով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
13 սեպտեմբեր 1990 թ.